# ՆԵԱՊՈԼԻ ԳՐԻԳՈՐ ՀԱՅԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ. ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՎԱՐՔԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ

## (մաս առաջին)[1]

**ՇՈՂԱԿԱԹ ԴԵՎՐԻԿՅԱՆ**
*արվեստաբան*
*Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան*
*ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ*
*devrikyan@gmail.com*

*ՀՏԴ՝ 75; 75.03*
*DOI: 10.54503/1829–4278.2024.2–54*

**Ամփոփագիր**

Իտալիայի Նեապոլ քաղաքում վաղ միջնադարից առ այսօր գործում է Գրիգոր Լուսավորչի պատվին անվանակոչված վանական համալիր: Այնտեղ են պահվում Հայոց առաջին հայրապետի գանգը և որոշ մասունքներ, որոնք 8–րդ դարում մի խումբ միանձնուհիներ Կոստանդնուպոլսից տարել են Իտալիա: Մենաստանի արխիվում պահպանվել են փաստաթղթեր, որոնք ներկայացնում են վանքի ստեղծման, այնտեղ Լուսավորչի նշխարների ամփոփման և միաբանության գործունեության վերաբերյալ տեղեկություններ: 16–րդ դարում վերակառուցված մենաստանը նկարազարդվել է որմնանկարներով, որոնց մեծ մասը նվիրված է Ս. Գրիգորին և ներկայացնում է նրա վարքը: Հիմնականում բարոկկոյի ոճով արված այդ որմնանկարները Հայոց եկեղեցու միակ համաքրիստոնեական սրբին պատկերում են եվրոպական սրբերին բնորոշ վարքագրական մանրամասն պատկերաշարով: Այս եկեղեցին՝ Գրիգոր Լուսավորչին նվիրված արվեստի տարատեսակ գործերի առկայությամբ, գեղանկարչության մասշտաբի և հանդիսավորության տեսանկյունից եզակի օրինակ է հայ և համաշխարհային արվեստում:

Հոդվածում ներկայացվում է Գրիգոր Հայի մենաստանի և եկեղեցու հիմնադրման պատմությունը, գործունեությունը և արվեստաբանական տեսանկյունից վերլուծվում են եկեղեցու որմնանկարները:

1 Հետազոտությունն իրականացվել է «Հայագիտական հետազոտությունների ազգային ընկերակցություն» (NAASR) ամերիկյան կազմակերպության տրամադրած դրամաշնորհի շրջանակներում:

**Բանալի բառեր.** Գրիգոր Լուսավորիչ, Նեապոլի Գրիգոր Հայի մենաստան, որմնանկար, Սուրբ Գրիգորի 12 չարչարանքներ, Հայոց դարձ

Հայաստանից և հայկական միջավայրից դուրս Հայոց եկեղեցու միակ համաքրիստոնեական սուրբը՝ Գրիգոր Լուսավորիչը, մեծ համբավ և պաշտամունք է ունեցել նաև այլազգիների շրջանում: Ասվածի վառ ապացույցն է Իտալիայի Նեապոլ քաղաքում գտնվող Գրիգոր Հայի վանական համալիրը:

Վաղ միջնադարում ստեղծված այդ մենաստանում են պահվում Հայոց առաջին հայրապետի գանգը և նշխարները[2]: Մենաստանը և եկեղեցին, դարերի պատմություն ունեն, և դրանց հիմնումը հասնում է 4-րդ դար՝ Հռոմեական կայսրությունում քրիստոնեության ընդունման ակունքներին, և կապվում է Կոստանդիանոս Մեծ կայսեր անվան հետ:

Համաձայն Գրիգոր Հայի մենաստանի արխիվային փաստաթղթերի՝ 16-18-րդ դարերում ընդլայնված և վերակառուցված ողջ համալիրի գեղարվեստական ներքին հարդարանքն իրականացրել են 30-ից ավելի նկարիչներ և մոտ 40 արհեստավոր՝ քարգործ, ատաղձագործ, կավագործ, արծաթագործ և ոսկերիչ վարպետներ, որոնց շնորհիվ ստեղծվել և տեղադրվել են փորագիր փայտյա դռներ, վենետիկյան ապակուց պատուհաններ, մարմարե հատակներ, սյուներ, աստիճաններ, շատրվաններ, ինչպես նաև երաժշտական գործիքներ, քանդակներ և արվեստի բազում այլ գործեր[3], որոնց շնորհիվ եկեղեցին այսօր ունի այն շքեղ տեսքը, որով տպավորում է Նեապոլի հյուրերին և մշտապես գովերգում Հայոց հայրապետի փառքը (նկ. 1):

Գրիգոր Հայի վանական համալիրը գտնվում է Նեապոլի պատմական կենտրոնում՝ Գրիգոր Հայի համանուն փողոցում: Մշտապես բազմամարդ այդ փողոցում՝ ամենօրյա անցուդարձի, զբոսաշրջիկների հոսքի, սրճարանների և խանութների կողքին, եկեղեցին առաջին հայացքից աննկատ է մնում: Վերջինիս ճակատը հարդարված է շատ պարզ, իսկ կավե գունագեղ սալիկներով ծածկված գմբեթը չի երևում փողոցի կողմից, և միայն բարձր զանգակատունն ու փոքրիկ ցուցանակն են ուղղորդում դեպի եկեղեցու մուտքը: Ընդարձակ նախամուտքից մոտ 4 մետր բարձրությամբ դռնով ներս մտնելով՝ հայտնվում ենք ամբողջովին որմնանկարներով, գեղանկարներով, մարմարե քանդակներով, փայտյա փորագրություններով և դեկորատիվ այլ տարրերով հարդար-

2 Կա նաև ավանդազրույց, ըստ որի՝ Գրիգոր Լուսավորչի գանգը և որոշ մասունքներ Բյուզանդիայից տարվել են Հունաստան և պահվում են Աթոս լեռան վանքում: Այս մասին տե՛ս **Μουτσόπουλος Ν., Δημητροκάλλης Γ.,** *Η λατρεία του Αγίου Γρηγορίου της Μεγάλης Αρμενίας στην Ελλάδα*, Αθήνα, 2001:

3 **Spinosa N., Pinto A., Valerio A.**, *San Gregorio Armeno Appendice Documentaria – Parte A*, Napoli, Fridericiana Editrice Universitaria, 2013, p. 11-14.

ված եկեղեցում: Արվեստի այդ ստեղծագործությունների զգալի մասը նվիրված է Ս. Գրիգորին և ներկայացնում է նրա վարքի բոլոր կարևոր դրվագները:

Հայ ժողովրդի հետ ուղղակիորեն կապվող այս կոթողային փառահեղ շինության որմնանկարները հայալեզու գրականության մեջ արվեստաբանական տեսանկյունից չեն շրջանառվել: Այս հոդվածով կփորձենք ներկայացնել Գրիգոր Հայի մենաստանի և եկեղեցու հիմնադրման պատմությունը, գործունեությունը և կատարել եկեղեցու որմնանկարների արվեստաբանական վերլուծություն:

## Մենաստանի հիմնադրման և վաղ շրջանի պատմությունը

Գրիգոր Լուսավորչի մասունքների՝ Նեապոլում հայտնվելու մասին ուշմիջնադարյան իտալական աղբյուրներում գերակա են հիմնականում երկու տարբերակ: Ըստ առաջինի՝ բազմաթիվ աղբյուրներ հիշատակում են, որ Ս. Գրիգոր Հայի մենաստանի վայրում հռոմեական ժամանակներում եղել է Ցերերային նվիրված քրմուհիների տաճար[4]: Ասվում է, որ Կոստանդիանոս կայսեր մոր՝ Հեղինեի կամ կայսրուհու հրամանով հեթանոսական այդ տաճարը ոչնչացվել է և դրա տեղում քրիստոնեական եկեղեցի է կառուցվել[5]:

16-րդ դարավերջի մի գրության համաձայն՝ հենց Կոստանդիանոս կայսրն է հիմնել այդ մենաստանը, և, ի նշանավորումն դրա, առ այսօր մենաստանում տոնում են կայսեր հիշատակի օրը. «Այս վանքը Նեապոլում Կոստանդիանոս Մեծ կայսեր կառուցած եկեղեցիներից է. կառուցվել է Տիրոջից հետո 336 թվականին: Այստեղ են պահվում բազմաթիվ թանկարժեք մասունքներ, այդ թվում՝ երկաթե շղթան, որով կապվել է Մեծ Հայքի սուրբ Գրիգոր եպիսկոպոսը, նույն ինքը՝ սուրբ Լիգորիոսը[6]: Այս սուրբը բազում չարչարանքների է ենթարկվել Դիոկղետիանոս կայսեր դաժան կառավարման ժամանակ, բայց հետո, սուրբ վախճանով և բազում հրաշքներով լուսավորված, դեպի ավելի լավ կյանք է փոխադրվել սեպտեմբերի 30-ին՝ մոտավորապես Տիրոջ 325 թվականին: Կոստանդիանոս կայսրը, սրբի նկատմամբ մեծ հավատով և նվիրվածությամբ լցված, ժամանելով Նեապոլ, իր հետ բերեց նրան չարչարելիս օգտա-

4 **Catalani L.**, *Le chiese di Napoli: descrizione storica ed artistica*, vol. 1, Napoli, Tip. fu Migliaccio, 1845, p. 98.

5 **Chiarini G. B.,** *Notizie del bello dell'antico e del curioso della città di Napoli raccolte dal Carlo Celano*, vol. 3, Napoli, Stamperia Floriana, 1858, p. 756.

6 Նեապոլյան վաղ շրջանի բարբառում «Գրեգորիո» անունը արտասանվել է «Լիգորիո»: Այդ է պատճառը, որ բազում արձանագրություններում հիշատակվում է անվան այդ տարբերակը:

գործած շղթան: Նա մենաստան և վանք կառուցեց և սրբազան մասունքները պահեց այնտեղ, որոնք բազում հրաշքներ կատարեցին՝ բուժելով դիվահարներին»[7]:

Գրիգոր Հայի մենաստանի արխիվում պահվող 1580 թվականով թվագրվող ձեռագիր փաստաթղթում[8] մենաստանի ստեղծման մասին գրված է. «Տարածված կարծիք կա, որ մեր վանքը հիմնադրել է Կոստանդիանոս կայսրը, որը Նեապոլ է այցելել Քրիստոսի ծննդից հետո՝ մոտ 315 թվականին: Ասում են, որ այդ ժամանակաշրջանում, ի թիվս այլ բարի գործերի, նա հիմնել է այս վանքը: ...Այնուամենայնիվ, ճշմարտությունն այն է, որ Հեղինե թագուհին՝ վերոհիշյալ կայսեր մայրը, այն կառուցել է Քրիստոսի ծննդյան 328 թվականին՝ գուցե իր որդու գիտությամբ և հավանությամբ: Իր որդուց և Նիկիայում տեղի ունեցած ժողովից թագուհին իմանում է հայաստանցի Գրիգորի հրաշագործ կյանքի և երջանիկ մահվան մասին և նրա հիշատակին հիմնում է մեր այս եկեղեցին, որին կից կառուցվում է նաև կուսանանց մենաստանը»[9]:

Երկրորդ՝ առավել հիմնավոր և հավանական տարբերակի համաձայն՝ Ս. Գրիգորի մասունքները 8-րդ դարի վերջին՝ պատկերամարտության շրջանում, Կոստանդնուպոլսից Նեապոլ են տարել մի խումբ հույն կույսեր[10]: Այս մասին հիշատակությունները ևս բազմաթիվ են[11]:

Կաթոլիկ եկեղեցու կարդինալ, պատմաբան Կեսար Բարոնիուսը (1538–1607 թթ.) իր «Martyrologium Romanum» (Հռոմեական նահատակաբանություն) աշխատությունում պատմում է հույն միանձնուհիների Նեապոլ հասնելու մասին և գրում է, որ այդ պատմությանը նա ծանոթացել է հենց Նեապոլում՝ Գրիգոր Հայի եկեղեցու հին գրառումներից. «Հալածանքներից փախչելով՝ մի խումբ միանձնուհիներ, Արևելքից գալով Իտալիա, իրենց հետ բերում են Հայոց հայրապետի սուրբ գանգը և այլ նշխարներ: Հասնելով Նեապոլ՝ նրանք ջերմ ընդունելության են արժանանում: Մեծ եպիսկոպոսի պատվին մենաստան է հիմնվում և նոր

7 **Divenuto F., Araldi G. F.**, *Napoli l'Europa e la Compagnia di Gesù nella Cronica di Giovan Francesco Araldo*, Napoli, Edizioni scientifiche italiane, 1998, p. 299.

8 Այս փաստաթուղթը 1851 թ. առաջին անգամ հրատարակել է Ռաֆայել Մարիա Զիտոն: Ամբողջությամբ տես **Zito R. M.**, *Intorno ad una Cronica del Monistero di s. Gregorio Armeno in Napoli, or per la prima volta messa a stampa*, Napoli, La Scienza e la Fede, 1851: Այդ մասին տես նաև **Valerio A.**, *«Carche di dolore e bisognose d'aita». Le memorie di Fulvia Caracciolo, monaca di S. Gregorio Armeno (1580). Studio e testo critico di fonti del cinquecento*, Napoli, Fridericiana editrice universitaria, 2012.

9 **Spinosa N., Pinto A., Valerio A.**, *San Gregorio Armeno Appendice Documentaria ...*, p. 17.

10 *Touring Club Italiano, Guida d'Italia – Napoli e dintorni*, Milano, Touring Club Editore, 2001, p. 184.

11 **Spinosa N., Pinto A., Valerio A.**, *San Gregorio Armeno ...*, p. 19–34.

եկեղեցի է կառուցվում: Այդ հույն կույսերը Վասիլյան վանական կարգին էին պատկանում, սակայն նրանց մահից հետո լատին միանձնուհիները որդեգրում են Բենեդիկտյան կանոնադրությունը»[12]:

Որոշ աղբյուրներ էլ պնդում են, որ Լուսավորչի նշխարները միանձնուհիների կողմից հենց չորրորդ դարում են տարվել Նեապոլ և մենաստանն ի սկզբանե նվիրված է եղել Հայաստանի լուսավորչին[13]:

Այսպիսով, ելնելով վերոնշյալ տարբերակներից և մեջբերումներից, ինչպես նաև հիմնվելով Ս. Գրիգորի նշխարների գյուտի պատմության վրա[14]՝ կարծում ենք, որ Նեապոլում գործող հեթանոսական տաճարի տեղում Կոստանդիանոս կայսեր օրոք հիմնադրվել է քրիստոնեական մենաստան, որը 8-րդ դարում անվանակոչվել է Լուսավորչի պատվին, երբ մի խումբ միանձնուհիներ Նեապոլ են տարել սրբի մասունքները:

Ի տարբերություն իտալական աղբյուրների, որոնցում Լուսավորչի նշխարների՝ Նեապոլ տարվելու պատմության մասին տեղեկություններ կան սկսած 16-րդ դարից, հայկական աբյուրներն այս թեման հիշատակում են ավելի ուշ՝ 1800-ական թվականներից:

Լուսավորչի՝ Իտալիայում պահվող մասունքների մասին գրել է Մխիթարյան հայրերից Ստեփանոս Գիվեր Ագոնցը: Ըստ Ագոնցի՝ Նեապոլի կույսերը պահվում են Լուսավորչի գանգը, շղթան և կտորներ այն մահակներից, որոնցով հարվածել են սրբին[15]: Նա նույնպես նշում է, որ տեղացիները Հայոց հայրապետին «Ս. Լիգորիո» են կոչում: Հիմնվելով Կեսար Բարոնիուսի աշխատության վրա՝ Ագոնցը ևս հիշատակում է Բարսեղյան կույսերի կողմից նշխարները Պոլսից Իտալիա բերելը և գրում է, որ վերջիններիս հյուրընկալությամբ են ընդունում քաղաքի բնակիչները, այստեղ մի եկեղեցի են կառուցում, ուր ամփոփում են նաև սրբի մասունքները: Ագոնցը նշում է նաև, որ Լուսավորչի տոնին նրա նշխարները արծաթյա մասնատուփերի մեջ զետեղած դուրս են հանում հատուկ թափորով[16]:

Մխիթարյան վարդապետներից Լուսավորչի նշխարներին ուխտի է գնացել նաև հայ վարքագրության մեծ գիտակ Հայր Մկրտիչ Ավգերյանը: Նա տվել է նաև եկեղեցու՝ Լուսավորչի մատուռի սրբանկարի և որմնկարների նկարագրությունը, որոնք անփոփոխ են առ այսօր[17]:

---

12 **Baronio C.**, *Martyrologium Romanum*, Antverpiae, Officina Plantiniana, 1589, p. 257–258.

13 **D'Aloe S.**, Catalogo di tutti gli edifizi sacri della città di Napoli e suoi sobborghi, *Archivio storico per le province napoletane*, VIII, Napoli, 1883, p. 72.

14 **Աշճյան Մ. Արք.**, *Լուսավորչի լույս նշխարները*, Ս. Էջմիածին, «Մուղնի» հրատ., 2000, էջ 73–90:

15 **Ագոնց Ս. Գ.**, *Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի*, հտ. Գ. Վենետիկ, 1802, էջ 164:

16 Նույն տեղում:

17 **Ավգերյան Մ.**, *Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց*, հտ Գ., Վենետիկ, 1812, էջ 368–374:

Նեապոլում գտնվող Լուսավորչի մասունքների մասին 19-րդ դարի վերջին գրել է նաև Մեսրոպ վրդ. Ուղուրլյանը «Պատմութիւն Հայոց գաղթականութեան եւ շինութեան եկեղեցւոյ նոցա ի Լիվոռնոյ քաղաքի» գրքում: Նա գրում է, թե Նեապոլի Գրիգոր Հայի վանքում «ամփոփեալ կը պահուի Սուրբ Հօրս գանգն և շղթայից բեկորք: Եկեղեցւոյն յարակից է մենաստան իտալացի ազնուական կուսանաց, որոց նախորդք արևելքէն հոն փոխադրեալ էին»[18]:

Ինչպես նշվեց, Լուսավորչի մասունքները Պոլսից Իտալիա բերած կույսերը պատկանում էին Վասիլյան կարգին, սակայն 11-րդ դարի սկզբին՝ 1009 թվականին, Նեապոլի դքսի հրամանով չորս վանքեր, որոնք նվիրված էին Փրկչին, Ս. Գրիգոր Հային, Ս. Սեբաստիանին և Ս. Պանդալեոնին, միավորվեցին՝ դառնալով մեկ մենաստան: Այդ ժամանակից Գրիգոր Հայի մենաստանն անցավ բենեդիկտյան կարգի[19]:

Ընդլայնված վանական համալիրը նպաստեց նաև քաղաքային միջավայրի զարգացմանը: Պահպանված հիշատակություններից իմանում ենք, որ վանքին պատկանող հողերի մի մասը մշակել են միանձնուհիները, մյուսը վարձակալել են գյուղացիները, որոնք ստացած բերքի որոշ մասը նվիրել են մենաստանին[20]: Սակայն, վանքի եկամտի զգալի մասը գոյանում էր Նեապոլի և հարակից տարածքների ազնվական տոհմերի նվիրատվություններից, քանի որ հասարակ քաղաքացիներից բացի մենաստանը համալրում էին նաև այդ ազնվական ընտանիքների աղջիկները[21]: Սակայն արտակարգ իրավիճակներում, օրինակ, պատերազմների կամ համաճարակների ժամանակ, միայն նեապոլյան ընտանիքների նվիրատվությունները ինքնաբավություն չէին կարող ապահովել. նման դեպքերում միանձնուհիները օգնություն էին հայցում Սիցիլիայի թագավորներից[22]: Կարևոր է նշել, որ թե՛ պատմական ծանր և թե՛ խաղաղ ժամանակներում վանքին տրամադրվող օգնությունը չի դադարեցվել, որը վկայում է, որ կրոնական այդ հաստատությունը մշտապես եղել է քաղաքի մշակութային, քաղաքական և հասարակական ուշադրության կենտրոնում:

---

18 **Ուղուրլեան Մ.**, *Պատմութիւն հայոց գաղթականութեան և շինութեան եկեղեցւոյ նոցա ի Լիվոռնոյ քաղաքի*, Վենետիկ, Տպ. Մխիթ., 1891, էջ 230:

19 **Spinosa N., Pinto A., Valerio A.**, *San Gregorio Armeno: storia, architettura, arte e tradizioni, con fotografie di Luciano Pedicini*, Napoli, Fridericiana Editrice Universitaria, 2013, p.14-15.

20 Նույն տեղում, էջ 15.

21 **Valerio A.**, *I Luoghi della memoria. Istituti reli giosi femminili a Napoli dal IV al XVI secolo*, vol. I, Napoli, Luciano Editore, 2006, p. 196-198.

22 **Spinosa N., Pinto A., Valerio A.**, *San Gregorio Armeno: storia, architettura, arte e tradizioni*..., p. 16.

## Գրիգոր Հայի մենաստանի և եկեղեցու վերակառուցումը

Գրիգոր Հայի մենաստանի հին համալիրը (մինչև 16-րդ դ.), ինչպես բյուզանդական ուղղափառ պաշտամունքի հետ կապված մյուս վանքերը, կառուցված էր տիպաբանական այլ ձևով: Միանձնուհիները մեկ ընդհանուր շենքի սենյակներում չէին ապրում, այլ բնակվում էին բարձր պարսպապատված տարածքում գտնվող առանձին տներում[23]: Այդ տներում միանձնուհիներն ապրում էին սպասավորների հետ և նրանց թույլատրված էր հյուրընկալել իրենց բարեկամներին. «... նրանց հյուրասիրում էին և հաճախ թույլ էին տալիս գիշերել իրենց տանը»[24]: Պարսպից ներս՝ բակում, գտնվում էր փոքրիկ եկեղեցի, որտեղ պատարագ էր մատուցվում:

Նախկինում Բենեդիկտյան մենաստանները հաստատվում էին քաղաքների մարդաշատ կենտրոններում՝ աշխարհիկ կյանքին ավելի մոտ լինելու համար[25]: Քաղաքային ակտիվ միջավայրում էր կազմակերպված նաև Գրիգոր Հայի մենաստանի կյանքը՝ ոչ խիստ կանոններով: Սակայն ամեն ինչ փոխվեց Տրենտի ժողովից[26] հետո՝ 1566-ին, երբ միանձնուհիներին պարտադրվեց մեկուսանալ[27]: Այդ ժողովի որոշումները կարևոր փոփոխություններ մտցրեցին վանքի կանոնների, սոցիալական հարաբերությունների և միանձնուհիների ապրելակերպի և սովորույթների ութդարյա ավանդույթի մեջ: Դրանք, իհարկե, միանշանակ չընդունվեցին միաբանուհիների կողմից, սակայն, այլընտրանք չունենալով, նրանք համակերպվեցին նոր կարգերին[28]:

Փոփոխությունների նկատմամբ դիմադրությունը պայմանավորված էր նրանով, որ միանձնուհիներից շատերը, որոնք ազնվական ծագում ունեին, մենաստանում նույնպես շարունակում էին իրենց դիրքին վայել ապրելակերպը, և իհարկե, չէին ցանկանում հրաժարվել նախկին ազատությունից: Պարտադրվող նոր կարգերի պատճառով շատերը անգամ

23 Նույն տեղում, էջ 103:

24 **Celano C.**, *Delle notitie del bello, dell'antico e del curioso della città di Napoli*, Napoli, 1792, p. 757.

25 Բենեդիկտյան վանական կանոնադրության պատմության, կարգերի և սովորույթների մասին մանրամասն տես **Vanderputten S.**, *Medieval Monasticisms: Forms and Experiences of the Monastic Life in the Latin West*, Berlin, De Gruyter Oldenbourg, 2020; **Clark J. G.**, *The Benedictines in the Middle Ages*, Woodbridge, Boydell Press, 2011.

26 Տրենտի ժողովի մասին մանրամասն տես *The Council of Trent: Reform and Controversy in Europe and Beyond 1545–1700*, edited by **H. J. Selderhuis**, Göttingen, Vandenhoeck & Ruprecht Gmbh & Co, 2018.

27 **Spinosa N., Pinto A., Valerio A.**, *San Gregorio Armeno: storia, architettura, arte e tradizioni...*, p. 103.

28 Նույն տեղում:

ցանկանում էին թողնել վանական կյանքը[29]: 1568 թվականի նոյեմբերի 21–ին վանքի դռները բացվեցին նրանց համար, որոնք մտադիր չէին ընդունելու նոր պայմանները: Այդ ժամանակ միանձնուհիներից տասնյոթը հեռացան, սակայն հաջորդ օրերին յոթը ետ վերադարձան[30]:

Շինարարական աշխատանքներ սկսվեցին թե՛ մենաստանում, թե՛ եկեղեցում: Հասկանալի դարձավ, որ մեկուսացման նման պահանջի դեպքում անհրաժեշտ է մենաստանին տրամադրել ավելի մեծ տարածք՝ տեղի կյանքը սահուն կազմակերպելու և միանձնուհիների ու եկեղեցու այցելուների շփումը սահմանափակելու համար:

1572 թվականի մայիսից սկսվեցին վերակառուցման աշխատանքները: Նոր համալիրի ճարտարապետներն էին Ջովանի Ֆրանչեսկո Մորմանդոն, Ջովան Բատիստա Կավանյան և Ջովանի Վինչենցո դելա Մոնիկան[31]:

Հատկանշական է, որ շինարարական աշխատանքների ողջ ընթացքում միանձնուհիները չեն լքել մենաստանի տարածքը:

Մենաստանի տարածքը ընդարձակելու նպատակով առաջին հերթին ձեռք են բերվում հարևանությամբ գտնվող տներն ու շինությունները: Մենաստանի հիմնական շինարարությունն ընթանում է 1573–1577 թվականներին: Այդ ժամանակահատվածում կատարվում է միանձնուհիների անձնական խցերի, ընդհանուր օգտագործման տարածքների, այցելուներ ընդունելու հյուրասենյակների, խոհանոցների, սեղանատան, բուժարանի և այլ կենցաղային նշանակության տարածքների շինարարությունը: Անցկացվում է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ շենքի և շատրվանների համար, տեղադրվում են ծխնելույզներ, փորվում՝ ջրհորներ[32]: Ամեն բան արվում է միաբանության փակ և ինքնուրույն կյանքը կազմակերպելու համար: Պետք է նշել, որ մենաստանի վերանորոգման և ընդլայնման աշխատանքները որոշակի ընդհատումներով և ոչ նախկին մեծ ծավալով շարունակվում են մինչև 18–րդ դար[33]:

Տրենտի ժողովի ժամանակ որոշվել էր ոչ միայն միանձնուհիներին մեկուսացնել քաղաքային կյանքից, այլ նաև մենաստանը առանձնաց-

29 **Facchiano A.**, *Monasteri femminili e nobiltà a Napoli tra Medioevo ed età moderna: il Necrologio di S. Patrizia (secc. XII–XVI)*, Edizioni studi storici meridionali, 1992, p. 23.

30 **Molinaro G.**, *San Gregorio Armeno*, Naples, Edizioni Scientifiche Italiane, 1929, p. 8.

31 **Spinosa N., Pinto A., Valerio A.**, *San Gregorio Armeno: storia, architettura, arte e tradizioni…*, p. 116:

32 Նույն տեղում, էջ 106, 108:

33 Բազում մանրամասներ են պահպանվել շինարարական ընթացքի, առաջացած դժվարությունների և անգամ ճարտարապետների և վարպետների վճարների մասին: Այդ ամենի մասին տես **Spinosa N., Pinto A., Valerio A.**, *San Gregorio Armeno: storia, architettura, arte e tradizioni…* p. 104–112.

նել եկեղեցուց՝ միաբանուհիների և հավատացյալների շփումը ևս սահմանափակելու նպատակով: Քանի որ հին եկեղեցին գտնվում էր մենաստանի բակի հենց կենտրոնում, 1574 թվականին ճարտարապետ Դելա Մոնիկայի գլխավորությամբ այն քանդվում է, բացառությամբ Մարիա Իդրիայի մատուռի, որը կանգուն է առ այսօր[34]:

Կառուցված նոր եկեղեցին ստանում է լատինական խաչի ձև ունեցող բազիլիկայի տեսք՝ տրանսեպտով և գմբեթավոր միջնախաչով: Արագորեն կատարվող շինարարական աշխատանքներից հետո անցնում են եկեղեցու արտաքին և ներքին հարդարմանը: 1576–1577 թթ. գմբեթը ծածկվում է մայոլիկա տեխնիկայով ջնարակապատված սալիկներով, որոնց կիրառումը տարածված էր 16–17-րդ դարերի նեապոլյան ճարտարապետության մեջ: 1579–1580 թթ. Դոմենիկո Ֆոնտանան եկեղեցու հատակը պատում է մարմարե սալիկներով[35]: Այդպիսով, 1580 թվականին եկեղեցու արտաքին և ներքին կարևոր հատվածների հարդարումն ավարտվում է: Նույն թվականին նաև եկեղեցին օծվում և բացվում է այցելուների համար[36]: Իհարկե, սա չի նշանակում, որ այդքանով շինարարական աշխատանքներն ավարտվում են, պարզապես դրա շնորհիվ հնարավոր է դառնում եկեղեցում ծիսական արարողություններ կատարել հավատացյալների համար:

1580–1584 թթ. նախաձեռնվում է առաստաղի հարդարումը, որը զարդարվում է Թեոդորո դ'Էրիկոյի նկարներով և նեապոլյան արհեստավորների փայտափորագրություններով: 1584–1590 թթ. կատարվում են եկեղեցու հարդարանքի մյուս կարևոր շտկումները՝ տեղադրվում են փորագիր փայտյա դռները, սալահատակները, ապակյա պատուհանները: Մենաստանի արխիվային փաստաթղթերից իմանում ենք, որ ճարտարապետ Դելա Մոնիկային արված վերջին վճարումը եղել է 1589 թ., իսկ 1595-ից արդեն որպես ճարտարապետ հիշատակվում է Ջովան Բատիստա Կավանյան[37]:

1606 թ. ավարտվում է գավթի կառուցումը, որի վրա հաջորդ դարում երգչախմբի համար ընդարձակ սենյակ է կառուցվում, որն այնպես էր նախագծված, որ արարողություններին մասնակցող միանձնուհիները տեսանելի չէին եկեղեցում հավաքված հավատացյալների համար[38]:

---

34 Նույն տեղում, էջ 112:

35 Նույն տեղում, էջ 114–116:

36 **Cantone G.**, Storia dell'architettura e conservazione: decifrare e interpretare, *L'Istituto Suor Orsola Benincasa. 1895–1995*, Naples, L'Istituto Suor Orsola Benincasa 1996, p. 420.

37 **Spinosa N., Pinto A., Valerio A.**, *San Gregorio Armeno: storia, architettura, arte e tradizioni…*, p. 110.

38 Նույն տեղում, էջ 122:

## Գրիգոր Հայի եկեղեցու՝ Լուսավորչին ներկայացնող որմնանկարները

1580–ականներին նկարներով և դեկորատիվ այլ տարրերով առաջին հերթին զարդարվում է եկեղեցու առաստաղը՝ դառնալով ինտերիերում ամենաակնառուն: Դրա հանդիսավորությունն ընդգծվում էր հատկապես եկեղեցու սպիտակ պատերի և մոխրագույն սյուների հակադրությամբ: Այդ շքեղ առաստաղի շինարարությունն ավարտվում է 1590 թ.[39], իսկ կառուցման համար օգտագործվում է բարդու փայտից 600 տախտակ[40]:

Փայտյա առաստաղի չորս խորություններում արված պատկերները խորանի կողմից ըստ հերթականության ներկայացնում են Հովհաննես Մկրտչի գլխատումը, Լուսավորչի՝ հայ արքունիքը մկրտելը, սուրբ Բենեդիկտին սրբերի հետ և Աստվածամոր թագադրումը (միանձնուհիների երգչախմբի սենյակի վերևում): Պատկերներից յուրաքանչյուրի չորս կողմերում տվյալ սրբի վարքի հետ կապված դրվագներ են ներկայացված: Կեսոնի մյուս հատվածներն ամբողջովին զարդարված են բուսածաղկային նախշերով և հրեշտակներով: Առաստաղի բարձրաճաշակ հարդարումը արդյունքն է նեապոլցի փորագրիչ Ջովանի Անդրեա Մալիուլոյի և ֆլամանդացի նկարիչ Թեոդորո դ'Էրիկոյի[41] համատեղ և փոխլրացնող աշխատանքի:

Ինչպես նշեցինք, առաստաղի կենտրոնում՝ օվալաձև շրջանակի մեջ, պատկերված է Հայոց դարձը (նկ. 2): Կենտրոնական և գերակա դիրքում Հայոց հայրապետն է, որին սպասավորում են երկու հոգևորականներ, իսկ նրա երկու կողմերում ծնկի են եկել արքայական ընտանիքը և վերնախավը: Ագաթանգեղոսը Լուսավորչի կատարած մկրտության մասին գրում է. «Իսկ ի լնուլ կիտին եղելոյ պահոցն կատարելոյ, առեալ երանելւոյն Գրիգորի զաշխարհաբանակ զօրացն, և զինքնին զթագաւորն, և զկին նորա Աշխէն, և զմեծ օրիորդն Խոսրովիդուխտ, և զմեծամեծսն ամենայն, և ամենայն մարդկաւ բանակին հանդերձ՝ ընդ այգն ի լուսանալ առաւօտուն յափն Եփրատ գետոյն մատուցանէր, և անդէն մկրտէր առ հասարակ զամենեսեան յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Եւ իբրև իջանէին մարդիկն ամենայն և թագաւորն ի մկրտութիւն անդր, ի ջուրսն Եփրատ գետոյն՝ նշան սքանչելի երևեալ յԱստուծոյ. զի զետղ առեալ ջուրք գետոյն՝ անդրէն դարձան ընդ կրուկն: Եւ լոյս

39 **Divenuto F.**, Napoli l'Europa e la Compagnia di Gesù, *«Cronica» di Giovan Francesco Araldo*, Napoli, Edizioni Scientifiche Italiane, 1998, p. 298.

40 **Spinosa N., Pinto A., Valerio A.**, *San Gregorio Armeno: storia, architettura, arte e tradizioni…*, p. 208

41 **Vargas C.**, *Teodoro d'Errico: la maniera fiamminga nel Viceregno*, Napoli, Electa, 1988, p. 37–38.

սաստիկ երևեալ ի նմանութիւն սեան լուսաւորի՝ և եկաց ի վերայ ջուրց գետոյն, և ի վերայ նորա նմանութիւն տէրունական խաչին. և այնչափ ծագեաց լոյսն, մինչև արգելոյր զձառագայթս արեգականն և նուաղեցուցանէր»[42]:

Լուսավորչից ձախ երկու կանայք են պատկերված, մեկը՝ պարզ, երկար շապիկով, սակայն թագով, իսկ նրա ետևում գտնվող մյուս կինը՝ շքեղ հագուստով, զարդերով և գեղեցիկ սանրվածքով: Պետք է նշենք, որ այս տեսարանը ներկայացնող այլ պատկերներ 16-րդ դարի եվրոպական արվեստից մեզ հայտնի չեն, սակայն հաջորդող դարերի գեղանկարներում, սրբանկարներում, փորագրանկարներում հիմնականում Տրդատի կողքին թագով և շքեղ հագուստով Աշխեն թագուհին է պատկերվում, իսկ Խոսրովիդուխտը առաքինի քրիստոնիայի պարզ և համեստ տեսքով է լինում: Այս պատկերում, սակայն, կարծում ենք, որ Տրդատի դիմաց պատկերված թագակիրը արքայադուստր Խոսրովիդուխտն է: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ օծության յուղը, դարձյալ ի տարբերություն հաջորդ դարերի պատկերների, Հայոց մկրտիչն առաջին հերթին հեղում է ոչ թե արքայի, այլ բոլորից շուտ ճշմարիտ հավատին հաղորդակից դարձած արքայաքրոջ վրա: Կոմպոզիցիան հավասարակշռված երկու մասի է բաժանում սրբի գլխավերևում պատկերված լուսեղեն սյունը, որը, ի տարբերություն Ագաթանգեղոսի պատմության, պսակված չէ խաչով: Եկեղեցու առաստաղի պատկերները դարերի ընթացքում փոշու շերտով են պատվել և ինչ-որ չափով կորցրել են գունային հնչեղությունը: Այդ է պատճառը, որ միայն ուշադիր նայելիս է հնարավոր տեսնել Եփրատ գետը, որը հոսում է սուրբ Գրիգորի ոտքերի մոտով:

Առաստաղի՝ Լուսավորչի կենտրոնական պատկերի չորս կողմերում՝ ձախից ըստ հերթականության պատկերված են նրա չարչարանքներից մի քանիսը՝ իններորդը (կողերը երկաթե ճանկերով քերելը), չորրորդը (ոտքին երկաթյա բևեռներ մեխելով վազեցնելը), հինգերորդը (գլուխը կռփահար անելով ծեծելը) և տասներկուերորդը (հալած կապարով մարմինը այրելը): Չորս պատկերներում կերպարները նույն արտաքինով են՝ Լուսավորիչը՝ գոտեկապով ծածկված և երկու չարչարողները՝ միանման հագուստներով (նկ. 3, 4, 5, 6):

Այս չորս դրվագներում նկարիչը փորձել է տպավորություն ստեղծել, թե չարչարողները, մեծ ջանքեր գործադրելով և եռանդով, փորձում են կատարել թագավորի հրամանները և անմարդկայնորեն տանջել: Նրանք պատկերված են շարժման մեջ՝ ձեռքերը բարձրացրած պատրաստվում են փայտերով հարվածել, Լուսավորչին քաշում են երկաթե

42 **Ագաթանգեղայ** *Պատմութիւն հայոց*, քնն. բնագիրը Գ. Տեր-Մկտրչյանի և Ս. Կանայանցի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1983, էջ 464:

մեխերի վրայով կամ հալած կապարը պատրաստվում են լցնել նրա վրա: Ի հակադրություն նրանց՝ Ս. Գրիգորը ներկայացվել է հանդարտ և անհաղորդ այն չարչարանքներին, որոնցից միայն մեկը բավական կլիներ սովորական մահկանացուին սպանելու համար: Այսպիսով, զուգահեռ է ստեղծվում մարդկության Փրկչի և հայոց ազգի լուսավորչի՝ աստվածային զորացմամբ չարչարանքներին դիմանալու միջև: Հոգևոր զուգահեռից բացի՝ նկատելի է արտաքին նմանություն: Խաչելության տեսարանի Քրիստոսի արտաքինն է հիշեցնում Ս. Գրիգորի գոտեկապը, լուսապսակը, երկար մազերը, մորուքը և ներքին հնազանդությունը, որը երևում է նրա կեցվածքում և դեմքի արտահայտության մեջ: Քրիստոսի հետ զուգահեռ անցկացնելով՝ նկարիչն արտահայտել է այն անվերապահ պաշտամունքն ու հավատը, որ եղել է Հայոց հայրապետի նկատմամբ միջնադարյան Իտալիայում:

Առաստաղի ընդհանուր ոսկեգույնի, հրեշտակների ու բուսածաղկային մոտիվների երփներանգության մեջ չարչարանքների չորս դրվագներն առանձնանում են իրենց մուգ և մռայլ գույներով: Առաջին հերթին աչքի է զարնում Ս. Գրիգորի սպիտակ գոտեկապը, ապա չարչարողների դաժանությունն ու եռանդը խորհրդանշող կարմիր հագուստները և գլխարկները:

Լուսավորչին ներկայացնող ստեղծագործություններից՝ առաստաղի պատկերներից հետո ժամանակագրորեն հաջորդը ստեղծվում են սրբին նվիրված մատուռի պատկերները:

Գրիգոր Հայի եկեղեցու ներսում գլխավոր խորանի հետ մեկտեղ կան 12 խորանատիպ մատուռներ, որոնցից յուրաքանչյուրը հարդարված է բարձրարվեստ որմնանկարներով և գեղանկարներով, սակայն, այս հոդվածում կանդրադառնանք միայն Գրիգոր Լուսավորչի մատուռի պատկերներին:

17-րդ դարի 30-ական թվականներին, երբ արդեն կառուցված էին եկեղեցու 9 մատուռները, միանձնուհիները նախաձեռնում են եկեղեցու գլխավոր սրբին՝ Գրիգոր Լուսավորչին նվիրված մատուռի կառուցումը (աջ կողմից երրորդը)[43]: Շինարարական աշխատանքներն ավարտելուց և մարմարով սալիկապատելուց հետո մատուռի աջ և ձախ պատերին Ֆրանչեսկո Ֆրականցանոն պատկերում է չորս որմնանկար (ընդունված է համարել, որ դրանք ստեղծվել են 1635 թվականին[44]) (նկ. 7, 8, 10, 11): Առաջինը ներկայացնում է Լուսավորչին վիրապը նետելը: Երկու դաժանադեմ սպասավորները Ս. Գրիգորի հյուծված մարմինը մոտեցնում են

43 **Spinosa N., Pinto A., Valerio A.**, *San Gregorio Armeno: storia, architettura, arte e tradizioni…*, p. 201.

44 *La Chiesa di San Gregorio Armeno a Napoli*, ed. **N. Yeghiazaryan**, Yerevan, Aredit, 2011, p. 28, 30.

վիրապին, որը մատով ցույց է տալիս նկարի անկյունում պատկերված Տրդատ արքան: Հալածանքներից պատռված հագուստով և հյուծված տեսքով Ս. Գրիգորի հայացքը երկինք է ուղղված: Տեսարանի խորքում պատկերվել են իրադարձությանը հետևող զինվորականներ, տղամարդիկ և կանայք:

Երկրորդ որմնանկարը ներկայացնում է պատուհասված Տրդատի՝ Լուսավորչից բժշկություն հայցելը (նկ. 8): Ցույց տալու համար այն երկար ժամանակը, որ Լուսավորիչն անց է կացրել վիրապում, այստեղ նկարիչը նրան պատկերել է երկարած, անխնամ մորուքով և մազերով: Սրբի առջև ծնկի եկած Տրդատը վարազագլուխ, ինչպես նաև վարազի նման մազերով ծածկված վզով և ոտքերով է: Նրա մեջքի ետևում կանգնած է Խոսրովիդուխտը, որը կարծես բարեխոսում է եղբոր բժշկման համար: Հավաքված մարդկանցից քրիստոնյա Խոսրովիդուխտն առանձնանում է իր ճերմակ մաշկով և բաց գույնի հագուստով:

Ֆրականցանոն մատուռի երկու լյունետներին պատկերում է նաև Լուսավորչի վեցերորդ (գլուխը մամլիչով սեղմելը) և տասներորդ (երկաթե դաստակների վրայով քաշելով մարմինը քերելը) չարչարանքները (նկ. 10, 11): Երկու հորինվածքներին բնորոշ են մուգ երանգներ, բազմամարդ լինելը և շարժունությունը:

Այս չորս որմնանկարներն իրենց ոճով տարբերվում են նախորդներից և ավելի մոտ են կարավաջոյական ոճին. կերպարներն ունեն հասարակ մարդկանց տեսք, ավելի իրապաշտական են և ծավալային, կիրառված են լուսաստվերային հակադրություններ:

Լուսավորչի մատուռի առաստաղին պատկերված է սրբի փառաբանումը, իսկ անկյունային խորշերին՝ ևս չորս չարչարանքներ: 1655 թ.-ին միանձնուհիներն այս աշխատանքը հանձնարարում են նորմանդացի նկարիչ Նիկոլո դե Սիմոնեին, որը, սակայն, մահանում է ժանտախտից մեկ տարի անց՝ հասցնելով պատկերել միայն Լուսավորչի երկրորդ չարչարանքը[45], ըստ որի՝ սրբին մեկ ոտքից կախեցին, աղը ծխեցին և դալար բրերով ծեծեցին (նկ. 9): Մեկ ոտքից կախված սրբի ձեռքերը կապված են ետևում, նրա գլուխը կախված է վառված կրակի բոցերի և ծխի մեջ, և երեք չարչարողները հարվածում են նրան երկար դալար ճյուղերով: Աչքի են ընկնում Տրդատի վառ կապույտ և կարմիր հագուստները:

1658 թ.-ից մատուռի նկարազարդման աշխատանքը շարունակում է Ֆրանչեսկո դի Մարիան՝ վրձնելով մյուս երեք չարչարանքները, առաստաղի պատկերը և խորանի գեղանկարը[46]:

---

45 **Spinosa N., Pinto A., Valerio A.**, *San Gregorio Armeno: storia, architettura, arte e tradizioni…*, p. 202.
46 Նույն տեղում:

Նա ընտրում է երրորդ (ոտքերը կոճղերի մեջ ճզմելը), իններորդ (կոողերը երկաթե ճանկերով քերելը) և դարձյալ տասներկուերորդ (հալած կապարով մարմինը այրելը) չարչարանքները (նկ. 12, 13, 14):

Նկարչի՝ Լուսավորչի վարքին և հայոց պատմությանը լավ ծանոթ լինելու ապացույցն են երրորդ չարչարանքը պատկերող որմնանկարի մանրամասները: Երկու փայտերի արանքում ամուր ձգված ոտքերով Լուսավորչին վրդովված արքան երկու ձեռքով ցույց է տալիս ոչ հեռվում գտնվող բարձր պատվանդանի վրա կանգնած հունական դիցաբանության որսի աստվածուհի Արտեմիսի (հռոմեական դիցաբանությունում՝ Դիանա) արձանը, որի ձեռքին նետ է, իսկ ոտքերի մոտ՝ եղնիկ: Արտեմիսի համարժեք աստվածուհին հայկական դիցարանում Անահիտն էր[47], ում, ըստ Ագաթանգեղոսի, զոհեր մատուցել և երկրպագել հրաժարվելիս պարզվեց Գրիգորի քրիստոնյա լինելը[48]:

Իններորդ չարչարանքը պատկերվել է վարքի նկարագրությանը համապատասխան: Խաչափայտ հիշեցնող համակարգից կախված սրբի կողերը երկաթե ճանկերով քերում են երկու ծառաներ:

Հետաքրքրական է, որ նկարիչը տասներկուերորդ չարչարանքը պատկերել է մատուռի աջ պատի որմնանկարի՝ այն է Լուսավորչին վիրապը նետելու տեսարանի հորինվածքի նմանությամբ: Ինչպես աջ պատի դրվագում երկու սպասավորները Ս. Գրիգորին բարձրացրել են, որպեսզի վիրապը նետեն, այնպես էլ այստեղ՝ սրբին պահել են հալած կապարով լի կաթսայի վրա:

Բոլոր դրվագներում Հայոց լուսավորիչը անտարբեր է անմարդկային չարչարանքներին և հայացքն ուղղված է դեպի երկինք՝ առ Աստված: Երևում է, որ չարչարանքների այդ չորս դրվագների ստորին մասում եղել են լատինատառ արձանագրություններ (հավանաբար չարչարանքների նկարագրությունները), սակայն դրանք այսօր մեծամասամբ մաքրված են: Նկատում ենք նաև, որ Նիկոլո դե Սիմոնեի միայնակ վրձնած միակ դրվագում կերպարներն ավելի շարժուն են, զգացմունքային: Զայրույթը, վրդովմունքը, ցասումը և զարմանքը դրոշմված են նրանց դեմքին: Իսկ նրան հաջորդած նկարիչը գործող անձանց համեմատաբար ավելի զսպված հույզերով է պատկերել:

Չարչարանքների դրվագներից վեր՝ մատուռի առաստաղին պատկերված է Լուսավորչի փառաբանումը երկնքում (նկ. 15): Սուրբ Գրիգորը բազմած է ամպի վրա՝ ինչպես գահին, իսկ մանկաղեմ հրեշտակները

47 Անահիտ աստվածուհու այլ ժողովուրդների դիցարանների հետ փոխառնչությունների մասին մանրամասն տես **Մելիք-Փաշայան Կ.**, *Անահիտ դիցուհու պաշտամունքը*, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ, 1963:
48 **Ագաթանգեղայ** *Պատմութիւն հայոց*, էջ 38:

վեր են բարձրացնում իրենց ուսերի վրա հենած ամպը: Լուսավորչից աջ գտնվող հրեշտակը հանդիսավոր կերպով պահել է նրա խույրը, իսկ ձախ կողմինը՝ հայրապետական գավազանը:

Ասվում է, որ Լուսավորչի մատուռում դրված է եղել սրբին ներկայացնող գեղանկար, որը վրձնել էր մատուռի կողային պատերի որմնանկարների հեղինակ Ֆրանչեսկո Ֆրականցանոն, սակայն այդ կտավը խոնավությունից վնասվում է և, հավանաբար, դրա նմանությամբ 1672-ին նոր կտավ է ստեղծում Ֆրանչեսկո դի Մարիան[49] (նկ. 16): Այն Ս. Գրիգորին ներկայացնում է կոթողային տեսքով՝ պատկառելի արտաքինով, հայրապետական հագուստով, խույրով և գավազանով: Նրա երկու կողմերում փոքրիկ հրեշտակներ են, որոնցից մեկը սրբի առջև ծնկի եկած պահել է Սուրբ Գիրքը: Լուսավորչի թիկունքում կանգնած են երկու երիտասարդ օրիորդներ, որոնք փետուրե գրչով կարծես գրի են առնում սրբի խոսքերը: Միգուցե նրանք հենց մենաստանի միաբանուհիների հավաքական կերպարն են, որ դարեր շարունակ մշտապես հավատարիմ են մնացել Ս. Գրիգորի պատգամներին:

Ինչպես նկատում ենք, հոդվածում քննված պատկերների չորս նկարիչները չեն պահել Լուսավորչի կերպարի արտաքին միաձևությունը: Որոշներում Ս. Գրիգորը անմորուս պատանի է, որոշներում միջին տարիքի սևահեր տղամարդ, մյուսներում էլ՝ սպիտակամորուս ծերունի:

Ընդհանուր առմամբ եկեղեցում աշխատած նկարիչները բարոկկոյի ոճի կրողն են եղել՝ յուրաքանչյուրը յուրովի: Նրանց աշխատանքներին հիմնականում բնորոշ է դեկորատիվությունը, դինամիզմը, զգացմունքայնությունը, դետալների նկատմամբ ուշադրությունը, խորհրդանշանների ու ալեգորիաների առկայությունը:

17-րդ դարավերջին Գրիգոր Հայի եկեղեցին հարստանում է Լուկա Ջորդանոյի որմնանկարներով, որոնք, տեղադրած լինելով բարձր պատուհանների միջնորմերին, լայն ընդգրկմամբ պատմում են Լուսավորչի վարքը՝ հստակ ճշգրտությամբ և ընդունված պատկերագրությամբ, իսկ որոշ դեպքերում պատմական և գրական հիմք չունեցող հավելումներով և նորամուծություններով[50]:

Գրիգոր Հայի վանական համալիրը՝ Լուսավորչին նվիրված արվեստի տարատեսակ գործերի առկայությամբ, գեղանկարչության մասշտաբի և հանդիսավորության տեսանկյունից եզակի օրինակ է հայ և

49 **Spinosa N., Pinto A., Valerio A.**, *San Gregorio Armeno: storia, architettura, arte e tradizioni…*, p. 202.

50 Մեկ տասնյակից ավելի մեծադիր այդ պատկերներին կանդրադառնանք հաջորդ հոդվածում:

համաշխարհային արվեստում: Վանական այս համալիրը Լուսավորչի՝ այդպիսով և հայ ժողովրդի՝ միջնադարյան Եվրոպայում ունեցած մեծ ճանաչման և հեղինակության ևս մեկ ապացույց է: Լինելով Նեապոլ քաղաքի այս վեհաշուք եկեղեցում և մենաստանում՝ կարող ենք ասել, որ միաբանությունն առ այսօր շարունակում է հարյուրամյակներ առաջ սկսած առաքելությունը՝ պահպանել համաքրիստոնեական սրբի մասունքները և գովերգել նրա փառքը:

# THE MONASTERY OF GREGORY THE ARMENIAN IN NAPLES: THE HISTORY OF ITS FOUNDATION AND THE WALL PAINTINGS ON THE LIFE OF GREGORY THE ILLUMINATOR (PART 1)

**SHOGHAKAT DEVRIKYAN**
*Art Historian*
*Matenadaran after Mesrop Mashtots*
*Institute of Arts, NAS RA*

**Summary**

In the city of Naples, Italy, a monastic complex named after St. Gregory the Illuminator has been active since the early Middle Ages. The skull and some relics of the first Patriarch of Armenia, brought to Italy in the 8th century by a group of nuns from Constantinople, are still kept there. The monastery's archives have preserved numerous documents that provide intriguing details about its foundation, the Illuminator's relics, and the activities of the congregation. Most of the frescoes in the monastic church, completely reconstructed in the 16th century, are dedicated to St. Gregory and depict all the key episodes of his life. These images, predominantly created in the Baroque style, portray the only pan–Christian saint of the Armenian Church with a detailed representation of hagiographic scenes characteristic of European saints. The church, with its diverse array of artworks dedicated to St. Gregory the Illuminator, stands as a unique example in both Armenian and global art in terms of the scale and grandeur of its painting. The article presents the history of the foundation of the monastery of St. Gregory the Armenian and its activities with an artistic analysis of the church frescoes.

**Keywords:** Gregory the Illuminator, Monastery of San Gregorio Armeno in Naples, wall painting, twelve tortures of St. Gregory, conversion of the Armenians

# МОНАСТЫРЬ ГРИГОРИЯ АРМЯНСКОГО В НЕАПОЛЕ: ИСТОРИЯ ОСНОВАНИЯ И ЖИТИЙНЫЙ ЦИКЛ ГРИГОРИЯ ПРОСВЕТИТЕЛЯ (ЧАСТЬ I)

**ШОГАКАТ ДЕВРИКЯН**
*искусствовед*
*Матенадаран имени Месропа Маштоца*
*Институт искусств НАН РА*

**Аннотация**

В городе Неаполь в Италии с раннего средневековья по сей день действует монастырский комплекс, названный в честь Святого Григория Просветителя. Здесь хранятся череп и некоторые из мощей первого армянского патриарха, которые в VIII веке были привезены в Италию группой монахинь из Константинополя. В архиве монастыря сохранилось множество документов, повествующих об истории создания обители, интересные подробности о переносе мощей Просветителя и о деятельности конгрегации. Большинство настенных фресок полностью реконструированного в XVI веке монастыря, посвящено св. Григорию и представляют все важные эпизоды жития святого. Данные фрески, выполненные в стиле барокко, изображают единственного общехристианского святого Армянской Церкви с подробным представлением сюжетов, характерных для житийной иконографии европейских святых. Данная церковь, посвященная св. Григорию, с разнообразными произведениями искусства, является уникальным примером с точки зрения масштабности и торжественности живописи как в армянском, так и в мировом искусстве. В статье представлены история основания монастыря и церкви Григория Армянского, деятельность последних, а также приводится искусствоведческий анализ фресок церкви.

**Ключевые слова:** Григорий Просветитель, монастырь Сан Грегорио Армено, Неаполь, настенная роспись, двенадцать мучений Святого Григория, Крещение армян

## Գրականության ցանկ


1. **Ագաթանգեղայ** *Պատմութիւն հայոց* (քնն. բնագիրը Գ. Տեր-Մկտրչյանի և Ս. Կանայանցի), Երևան, ԵՊՀ հրատ., 1983:
2. **Ագոնց Ս. Գ.**, *Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի*, հտ. Գ. Վենետիկ, 1802:
3. **Աշճյան Մ. Արք.**, *Լուսավորչի լույս նշխարները*, Ս. Էջմիածին, «Մուղնի» հրատ., 2000:
4. **Ավգերյան Մ.**, *Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց*, հտ Գ., Վենետիկ, 1812:
5. **Մելիք-Փաշայան Կ.**, *Անահիտ դիցուհու պաշտամունքը*, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ, 1963:
6. **Ուղուրլեան Մ.**, *Պատմութիւն հայոց գաղթականութեան և շինութեան եկեղեցւոյ նոցա ի Լիվոռնոյ քաղաքի*, Վենետիկ, Տպ. Մխիթ., 1891:
7. **Baronio C.**, *Martyrologium Romanum*, Antverpiae, Officina Plantiniana, 1589.
8. **Cantone G.**, Storia dell'architettura e conservazione: decifrare e interpretare, in *L'Istituto Suor Orsola Benincasa. 1895–1995*, Naples, L'Istituto Suor Orsola Benincasa 1996.
9. **Catalani L.**, *Le chiese di Napoli: descrizione storica ed artistica*, vol. 1, Napoli, Tip. fu Migliaccio, 1845.
10. **Celano C.**, *Delle notitie del bello, dell'antico e del curioso della città di Napoli*, Napoli, 1792.
11. **Chiarini G. B.,** *Notizie del bello dell'antico e del curioso della città di Napoli raccolte dal Carlo Celano*, vol. 3, Napoli, Stamperia Floriana, 1858.
12. **Clark J. G.**, *The Benedictines in the Middle Ages*, Woodbridge, Boydell Press, 2011.
13. **D'Aloe S.**, Catalogo di tutti gli edifizi sacri della città di Napoli e suoi sobborghi, *Archivio storico per le province napoletane*, VIII, Napoli, 1883.
14. **Divenuto F., Araldi G. F.**, *Napoli l'Europa e la Compagnia di Gesù nella Cronica di Giovan Francesco Araldo*, Napoli, Edizioni scientifiche italiane, 1998.
15. **Divenuto F.**, Napoli l'Europa e la Compagnia di Gesù, in *«Cronica» di Giovan Francesco Araldo*, Napoli, Edizioni Scientifiche Italiane, 1998.
16. **Facchiano A.**, *Monasteri femminili e nobiltà a Napoli tra Medioevo ed età moderna: il Necrologio di S. Patrizia (secc. XII–XVI)*, Edizioni studi storici meridionali, 1992.

17. *La Chiesa di San Gregorio Armeno a Napoli*, ed. **N. Yeghiazaryan**, Yerevan, Aredit, 2011.
18. **Molinaro G.**, *San Gregorio Armeno*, Naples, Edizioni Scientifiche Italiane, 1929.
19. **Spinosa N., Pinto A., Valerio A.**, *San Gregorio Armeno Appendice Documentaria – Parte A*, Napoli, Fridericiana Editrice Universitaria, 2013.
20. **Spinosa N., Pinto A., Valerio A.**, *San Gregorio Armeno: storia, architettura, arte e tradizioni, con fotografie di Luciano Pedicini*, Napoli, Fridericiana Editrice Universitaria, 2013.
21. *The Council of Trent: Reform and Controversy in Europe and Beyond 1545–1700* (ed. by H. J. Selderhuis), Göttingen, Vandenhoeck & Ruprecht Gmbh & Co, 2018.
22. *Touring Club Italiano, Guida d'Italia – Napoli e dintorni*, Milano, Touring Club Editore, 2001.
23. **Valerio A.**, *I Luoghi della memoria. Istituti reli giosi femminili a Napoli dal IV al XVI secolo*, vol. I, Napoli, Luciano Editore, 2006.
24. **Valerio A.**, *«Carche di dolore e bisognose d'aita». Le memorie di Fulvia Caracciolo, monaca di S. Gregorio Armeno (1580). Studio e testo critico di fonti del cinquecento*, Napoli, Fridericiana editrice universitaria, 2012.
25. **Vanderputten S.**, *Medieval Monasticisms: Forms and Experiences of the Monastic Life in the Latin West*, Berlin, De Gruyter Oldenbourg, 2020.
26. **Vargas C.**, Teodoro d'Errico: la maniera fiamminga nel Viceregno, Napoli, Electa, 1988.
27. **Zito R. M.**, *Intorno ad una Cronica del Monistero di s. Gregorio Armeno in Napoli, or per la prima volta messa a stampa*, Napoli, La Scienza e la Fede, 1851.

## Նկարների ցանկ

1. Գրիգոր Հայի եկեղեցու ներքին հարդարանքը
2. Գրիգոր Լուսավորչի կողմից Հայոց արքայական ընտանիքի և վեր-նախավի մկրտությունը. Թեոդորո դ'Էրրիկո, 1580-ական թթ.
3. Գրիգոր Լուսավորչի ինն երորդ չարչարանքը. Թեոդորո դ'Էրիկո, 1580-ական թթ.
4. Գրիգոր Լուսավորչի չորրորդ չարչարանքը. Թեոդորո դ'Էրիկո, 1580-ական թթ.

5. Գրիգոր Լուսավորչի հինգերորդ չարչարանքը. Թեոդորո դ'Էրիկո, 1580-ական թթ.
6. Գրիգոր Լուսավորչի տասներկուերորդ չարչարանքը. Թեոդորո դ'Էրիկո, 1580-ական թթ.
7. Ս. Գրիգորին վիրապը նետելը. Ֆրանչեսկո Ֆրականցանո, 1635 թ.
8. Խոզակերպ Տրդատը Ս. Գրիգորից բժշկություն հայցելիս. Ֆրանչեսկո Ֆրականցանո, 1635 թ.
9. Գրիգոր Լուսավորչի երկրորդ չարչարանքը.Նիկոլո դե Սիմոնե, 1655 թ.
10. Գրիգոր Լուսավորչի վեցերորդ չարչարանքը. Ֆրանչեսկո Ֆրականցանո, 1635 թ.
11. Գրիգոր Լուսավորչի տասներկուերորդ չարչարանքը. Ֆրանչեսկո դի Մարիա, 1658 թ
12. Գրիգոր Լուսավորչի երրորդ չարչարանքը. Ֆրանչեսկո դի Մարիա, 1658 թ.
13. Գրիգոր Լուսավորչի իններորդ չարչարանքը. Ֆրանչեսկո դի Մարիա, 1658 թ.
14. Գրիգոր Լուսավորչի տասներկուերորդ չարչարանքը Ֆրանչեսկո դի Մարիա, 1658 թ.
15. Գրիգոր Լուսավորչի փառաբանումը երկնքում. Ֆրանչեսկո դի Մարիա, 1658 թ.
16. Գրիգոր Լուսավորիչը հրեշտակներով շրջապատված. Ֆրանչեսկո դի Մարիա, 1672 թ.

*Ընդունվել է՝ 18.07.2024*
*Գրախոսվել է՝ 16.08.2024*
*Հանձնվել է տպ.՝ 03.03.2025*



1

2

3

4

5

6

7

8

9

10

11

12

13

14

15

16